**Նոտարական ակտի կոդ:** 619-20200525-88-4562428
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 5CV7U4

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6**
**30.11.2011թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ՀՀ ք. Նոյեմբերյան

Երկու հազար քսան թվականի մայիսի քսանհինգին *25.05.2020*

**Ի փոփոխումն և ի լրացումն 21.05.2020թ. տրված թիվ 745 համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմը,** պետական գրանցամատյանում բյուջետային հիմնարկի (կազմակերպության) գրանցման (հաշվառման) վկայական N 01Բ1082424, տրված 28.10.2016թ., հասցեն՝ ՀՀ ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, ՀՎՀՀ՝ 07619196,այսուհետ **,,Կողմ-1,,,** ի դեմս համայնքի ղեկավար՝ **Կարեն Հովիկի Աբազյանի,** ծնված 10.03.1976թ., ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ արական, անձնագիր 000056291, տրված 22.11.2012թ. 047-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ ք. Նոյեմբերյան, Կարախանյան 1 (մեկ) հասցեում, որը գործում է ՀՀ օրենսդրության, կանոնադրության, թիվ 40 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 23.09.2016թ. թիվ 73-Ա և 29.04.2020թ. թիվ 179-Ա որոշումների հիման վրա և որի անունից համաձայն 07.05.2020թ.-ին տրված թիվ 35 լիազորագրի հանդես է գալիս **Հունան Իսրայելի Սարիբեկյանը,** ծնված 12.01.1974թ. ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ արական, անձնագիր 002111003, տրված 22.06.2015թ. 047-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Տավուշի մարզ, հ. Նոյեմբերյան, բն. Ոսկևան, 7-րդ փող., տուն 25 (քսանհինգ) հասցեում մի կողմից և **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն,** գրանցման համարը՝ 286.184.1025088, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացու թիվ 3,7, ՀՎՀՀ՝ 02647057, այսուհետ **,,Կողմ-2,,** ի դեմս գլխավոր քարտուղար՝ **Էդգար Գևորգյանի,** որի անունից համաձայն 19.05.2020թ. տրված լիազորագրի հանդես է գալիս**Գոհար Սանդրոյի Մարգարյանը,** ծնված 27.11.1974թ., ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ իգական, անձնագիր AN02446964, տրված 14.08.2012թ. 047-ի կողմից, հաշվառված ՀՀ Տավուշի մարզ, հ. Կողբ, գ. Կողբ, 19-րդ փողոց, տուն 10 (տաս) հասցեում, մյուս կողմից, այսուհետ **,, Կողմեր,,** ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 30.11.2011թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 5.1 կետը և 2017թ. փետրվարի 28-ին կնքված թիվ 3 համաձայնագրի 1.1 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին
1.1. Պայմանագրի 5.1. կետը, Սույն պայմանագիրը կնքվում է 5 /հինգ/ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով ՀՀ ԿԿ համապատասխան տարածքային ստորաբաժանումում իրավունքների գրանցման պահից շարադրել հետևյալ կերպ.
Սույն պայմանագիրը կնքվում է ***անորոշ ժամկետով*** և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով ՀՀ ԿԿ համապատասխան տարածքային ստորաբաժանումում իրավունքների գրանցման պահից:
1.2.Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի, որը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:
1.3. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2020թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**2. Այլ պայմաններ**

2.1. 30.11.2011թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Մեկ օրինակ մնում է ՀՀ «Տավուշի մարզ» նոտարական տարածքում:
2.3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից այն ստորագրելու պահից:
2.4 **Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ ԿԿ համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:**

Ս Տ Ո Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

| «ԿՈՂՄ 1» | «ԿՈՂՄ 2» |
| --- | --- |
| Նոյեմբերյանի քաղաքային համայնք | ՀՀ պետական եկամուտների կոմիտե |
| ք. Նոյեմբերյան, Երևանյան 4 | ք.Երևան, Խորենացի 3,7 |
| ՀՎՀՀ 07619196 | ՀՎՀՀ 02647057 |
| Հ/Հ 900395101091 | Հ/Հ 900011054013 |
| | Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն |
| Լիազորված անձ՝ | Լիազորված անձ՝ |
| ---------------------------------- Հ. Սարիբեկյան | ________________ Գ.Մարգարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Երկու հազար քսան թվականի մայիսի քսաhինգին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «Տավուշի մարզ» նոտարական տարածքի նոտար Վասակ Սանդրոյի Ամիրաղյանի կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված է:
գրանցված է գրանցամատյանում 756- ով

Գանձված է պետական տուրք՝ երկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վասակ Սանդրոյի Ամիրաղյան

Հավելված 1

30.11.2011թ. կնքված սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 6 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ բյուջետային միջոցների հաշվին | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ք. Նոյեմբերյան, Երևանյան 4 հասցեում գտնվող վարչական շենքից 44.02.քմ տարածքի վարձակալական ծառայություն | 44,020 | 66,030 | 88,040 | 110,050 | 132,060 | 154,070 | 176,080 | 198,090 | 220,100 | 242,110 | 264,120 | 264,120 |

*Վճարման ենթակագումարները ներկայացված են աճողական կարգով

«ԿՈՂՄ 1»

**Նոյեմբերյանի քաղաքային համայնք**
**ք.Նոյեմբերյան, Երևանյան 4**
**ՀՎՀՀ 07619196**
**Հ/Հ 900395101091**

**Լիազորված անձ**

------------------------------Հ. Սարիբեկյան
(ստորագրություն)

«ԿՈՂՄ 2»

**ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
**ք.Երևան, Խորենացի 3,7**
**ՀՎՀՀ 02647057**
**Հ/Հ 900011054013**
**Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն**

**Լիազորված անձ**

______________________ Գ. Մարգարյան
(ստորագրություն)